



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

11 ապրիլի 2011 թվականի N 138-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 42-րդ հոդվածով և 135-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր գյուղական համայնքի ղեկավարի հերթական ընտրություն 2011 թվականի հունիսի 5-ին, իսկ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բջնի գյուղական համայնքի ղեկավարի հերթական ընտրություն 2011 թվականի հունիսի 19-ին:
2. Առաջարկել թիվ 25 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին՝ հայտարարել ընտրության օր, սահմանված կարգով կազմակերպել ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումներ:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր և Բջնի գյուղական համայնքների ղեկավարներին՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի համաձայն իրականացնել համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունները:
4. Տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր գյուղական համայնքի նորընտիր ղեկավարին, որ լիազորությունները պետք է ստանձնի 2011 թվականի հուլիսի 11-ին, իսկ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բջնի գյուղական համայնքի նորընտիր ղեկավարին, որ լիազորությունները պետք է ստանձնի 2011 թվականի հուլիսի 24-ին, այն ամրագրելով իրենց կարգադրություններով:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս. Հակոբյանի վրա:



Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ